ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար A 4 ձևաչափի թղթի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/44» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2020 թվականի օգոստոսի 20-ին կնքված N ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/44 պայմանագրում (ասուհետ՝ Պայմանագիր) 2020 թվականի դեկտեմբերի 24-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա. Պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ենթակա քանակից 19510 կիլոգրամի մատակարարման համար հատկացվել են ֆինանսական միջոցներ:

Փոփոխության նկարագրություն՝

Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ը հաստատվել է նոր խմբագրությամբ՝ համաձայն համաձայնագրի հավելված N 1-ի:

Փոփոխության հիմնավորում՝

<u>Պայմանագրի 8.5, 8.13 կետեր:</u>

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ 20.08.2020թ. ԿՆՔՎԱԾ N «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/44» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «24» դեկտեմբերի 2020թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավարի պաշտոնակատար Ն.Գաբրիելյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Զանյանի (այսուհետ՝ Վաճառող), որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները, և հիմք ընդունելով 20.08.2020թ. կնքված N «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/44» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր), 8.5 և 8.13 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հաշվի առնելով Պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ենթակա քանակից 19 510 (տասնինը հազար հինգ հարյուր տասը) կիլոգրամի մատակարարման համար ֆինանսական միջոցների առկայությունը և Պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման անհրաժեշտությունը՝ Կողմերը որոշեցին Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

1.2 <<ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ>> վերտառությամբ Հավելված N 1-ում «մատակարարման ժամկետը» սյունակներից վերջին սյունակում «50 օրացուցային օրվա ընթացքում» բառերը փոխարինել «մինչև 25.12.2020թ.» բառերով:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Դատական դեպարտամենտ	***<<ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ>> ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15,17	Հասցե՝ ք. Երևան, Մաշտոցի պ. 16 Ա, 4
Հ/Հ՝ 900011192151, 900011025757	ՀՀ՝ 2050422209671001
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 02584897
ՀՀ ՖՆ գործարանային վարչություն	<<Ինեկոբանկ >> ՓԲԸ
Ղեկավարի պաշտոնակատար Ն.Գաբրիելյան	Տնօրեն Ա.Զանյան
_____	_____
Ստորագրություն	Ստորագրություն

1

Գ. Գաբրիելյան

Հավելված N 1
« 24» դեկտեմբերի 2020թ. կնքված N 2 համաձայնագրի

(Հավելված N 2
« 20 » օգոստոսի 2020 թ. կնքված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/44» ծածկագրով պայմանագրի)

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝			
			Հ/Հ՝ 900011192151			
			հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
1	30197622/504	Թուղթ, A4 ձևաչափի	17 867 140	17 867 140	17 867 140	**17 867 140**
			Հ/Հ՝ 900011025757			
1	30197622/7	Թուղթ, A4 ձևաչափի	-	-	11 432 860	**11 432 860**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15,17
Հ/Հ՝ 900011192151, 900011025757
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ գանձապետական կառավարություն

Ղեկավարի պաշտոնակատար՝ Գ. Գևորգեյան

/ստորագրություն/

ՎԱՃԱՌՈՂ
<<ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ>> ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Մաշտոցի պ. 16 Ա, 4
ՀՀ՝ 2050422209671001
ՀՎՀՀ՝ 02584897
<<Ինեկոբանկ >> ՓԲԸ

Տնօրեն՝ Ս. Հովհաննիսյան

/ստորագրություն/